

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՏԱՐԱԿՄԻՐՅՈՅԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ
ԽԱՅՄ ՍՆՈՒՆԴԱՐԴԺՈՂԿՈՄԱՏ — ԳԼԱՎՏԱԲԱԿ

ԸՆԿ. ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԽԱԽՈՏԻ ՅԵՎ ՄԱԽՈՐԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵ-
ՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԶԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՎԻՏԻՄ

Հրատարակություն N 12

Ծ Խ Ա Խ Ո Տ Ի
ՎՆԱՍԱՏՈՒ ՄԻՋԱՏՆԵՐԸ
Դ Ա Շ Տ ՈՒ Մ

ՄՏՈՒԳՎԱՄ Է 1961 թ.

(ԱԳՐՈՏԻՍ ՅԵՎ ԱՎԱԶՈՒՏԱՅԻՆ ՄԵԴԻԱՅԱԿ)



Գ Յ Ո Ւ Ղ Շ Ր Ա Տ • 1936 • Յ Ե Ր Կ Ա Ն

**ՄԻՍԵՆՈՏԻ ՎՆԱՍԱՏՈՒ ՄԻՋԱՏՆԵՐԸ ԴԱՇՏՈՒՄ
ԱԳՐՈՏԻՍ ՅԵՎ ԱՎԱԶՈՒՏԱՅԻՆ ՄԵԴԼՅԱԿ**

632.7

Միսսյ.

633.71:632

ՄՏՈՒԳՎԱՄ Կ 1901

Սոցիալիստական ծխախոտագործության կրիմա-
կան նպատակն է՝ բարձրացնել ծխախոտի բերքի քա-
նակն ու վորակը:

Այս խնդիրը չի կարող կատարվել, յեթե պլա-
նային պայքար չմղվի այն ֆրասատու միջատների
դեմ, վորոնք լեբրեմն բերքի ավելի քան 25 առկուրը
ֆրասում և վորակն ղգալի չափով վատացնում են:

Ծխախոտը դաշտում տնկելու առաջին որերն
ամենաշատ ֆրասը հասցնում են ագրոտիսը (սովկա) և
ավազուտային մեղվակը:

ԱԳՐՈՏԻՍ

Ագրոտիսը գիշերային փոքրիկ թիթեռ է: Նրա
առջևի թևերը մոխրագույն-գորշ կամ մուգ-գորշ
գույնի լեն, յեթևու ընդմիջող ալիքավոր գծերով և
բողբոջաձև, կլոր ու սեպաձև բծերով (խալերով): Հե-
տևի թևերը բաց գույնի—համարյա սպիտակ են:

Թիթեռներն սկսում են թռչել մայիսին: Զու-
գավորումից հետո թիթեռներն սկսում են ձուռ դնել:
Զվերը շատ մանր են, գեղաձև, թեթևակի տափակ:
Նոր դրած ձվերը կաթնասպիտակավուն գույնի յեն,

633 423

A 3879



Թրթուրը դուրս գալուց առաջ նրանք գառնում են սև կապտագույն:

Թիթեռները գլխավորապես մուլախոտերի վրա կամ նրանց մոտ՝ ուղղակի հողի վրա յե՛ն ձու դնում:

Շատ հաճախ ձվերը դնում են պատատուկի, բարեղի, տատասկափշերի, ջղուլախոտի և այլ մուլախոտերի վրա, վորոնք լայն տերևներ կամ վերնաբնածառային փուռն ռնեն: Յերբեմն ձվերը դնում են նաև կուլտուրական բույսերի վրա: Ծխախոտի վրա ազրոտիսի ձվիկները հազվագյուտ դեպքերում են լինում:

Մի թիթեռն իր ամբողջ կյանքի ընթացքում մոտավորապես 800 հատ ձու յե դնում:

5—10 քրվա ընթացքում, նայած յեղանակին, ձվիկների միջից Թրթուրներ են դուրս գալիս:

Սկզբնական շրջանում Թրթուրները բաց ապրում են այն բույսերի վրա, վորտեղ նրանք առաջ են յեկել: Մնվելով տերևներով՝ նրանք կրծելով տերևների վրա ծակոտիններ են առջացնում կամ տերևի հյուսվածքն են ուտում, չդիպչելով ներքևի կամ վերևի մաշկին: Մեծահասակ Թրթուրները կերակրվում են միայն գիշերները, իսկ ցերկն անց են կացնում հողի մեջ:

Մուլախոտերի վրայից Թրթուրներն անցնում են կուլտուրական բույսերի վրա, վորոնց թվում և ծխախոտի վրա: Դաշտում նոր տնկած ծխախոտի սածիլները նրանք կրծում են հողի անմիջական յերեսից, այնուհետև ուտում են տերևները և ցողունի մասը: Այն տարիները, յերբ ազրոտիսը մասսայական չափով է յերևում, տնկած ծխախոտի փասսվածքն այնքան խոշոր և լինում, վոր ստիպված են լինում փասսված

սածիլներն առնվազ 2—3 անգամ փոխել ու նորից տնկելը

Յերբ ծխախոտի ցողունները կոպտանում են, թրթուրներն այլևս չեն կտրուժ, այլ կրծոտում են: Այսպիսով, փաստված բույսերի աճումը չեա և մնում ու խիստ քամիների դեպքում կտրատվում են:

Թրթուրներին կյանքը 30—40 օր է տևում:

Մեծահասակ թրթուրները փայլուն գլյանցանման, կեղտոտ-մոխրագույն են լինում: Մեջքի ուղղությամբ անցնում են չերեք վոչ պարզ, ավելի մուգ գճեր: Մեծահասակ թրթուրի չերկարությունը մոտավորապես 50 միլիմետր է, իսկ հաստությունը՝ 7 միլիմետր:

Իրենց դարգացումն ավարտած թրթուրները հողի մեջ 10—30 սանտիմետր խորության վրա բուն են պատրաստում, վորոհզ հեռագայում կերպարանափոխվում հարսնյակ են դառնում: 2—3 շաբթից հետո հարսնյակներից թիթեռներ են դուրս գալիս: Հյուսիսային կովկասում թրթուրները հուլիսի վերջին են դուրս գալիս:

Այդ սերնդի թիթեռներն իրենց հերթին ձվիկները մոլախոտերի վրա յեն դնում և գլխավորապես թրթուրների նոր սերունդն է զարգանում:

Մեկ տարվա ընթացքում տեղի յե ունենում թիթեռների 2—3 սերունդ:

Վերջին սերնդի միջահասակ թրթուրները ձմեռում են հողի մեջ վոչ խորը և հարսնյակ են դառնում հաջորդ տարվա գարնանը:

ՊԱՅԲԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Այն դաշտերում, վորտեղ նախատեսված է ծխախոտ տնկել, տնկելուց 3—4 շաբաթ առաջ մոլախոտերը պետք է վոճնչացնել: Միջնակներում աճող մոլախոտերն այդ ժամանակամիջոցում հնձված պետք է լինեն:

2. Սածիլ տնկելուց առաջ ազրոտիսի թրթուրներ հայտաբերելիս անհրաժեշտ է թեփից, կերի ճակնդեղից կամ բամբակի քուսպից պատրաստած թաւնավոր գրավչանյութ շող տալ:

Ճակնդեղից գրավչանյութ պատրաստելու համար 750 գրամ փարիզյան կանաչ լուծում են 12 լիտր սիրոպ (շաբապ) պարունակող ջրի մեջ: Ստացված խառնուրդին 200 կիլոգրամ մանր կոտորած կերի ճակնդեղ են ավելացնում: Ըստ վորում մանրուէքը լավ և դաւաշու թյամբ խառնում են իրար, վորպեսզի փարիզյան կանաչի մասնիկներն անպայմանորեն կպչեն ճակնդեղի ամեն մի կտորին: Ճակնդեղի փոխարեն կարելի է վերցնել մոլախոտ, բայց վերջինս թիթեալ թրթուրների համար այժման ել գրավիչ չէ:

Փշրանքից (թեփից) կամ բամբակի քուսպից գրավչանյութ պատրաստելու համար մի կիլոգրամ փարիզյան կանաչը լուծում են 30 լիտր ջրի մեջ և այդ լուծույթն անընդհատ խառնելով՝ վրան 50 կիլոգրամ ալյուրի թեփ են ավելացնում կամ մանրած բամբակի քուսպ:

Այս կամ այն ձևով պատրաստած գրավչանյութը շող են տալիս ամբողջ դաշտը կամ փոքր կուլտերով դարսում ու խոտով ծածկում են: Մեկ հեկտարի հա-

մաք մտաւորապես 100 կիլոգրամ կտորտանք և պահանջվում (ճակնդեղի, կամ 30—40 կիլոգրամ թեփ կամ թե քուսպ):

3. Ծխախոտ տնկած տեղի մոտ աճող ագրոտիսի թրթուրներով վաբակված մոլախոտերին փարիզյան կանաչի և հանգած կրի խառնուրդ պետք և սրսկել: Մեկ մաս փարիզյան կանաչին 5 մաս հանգած կիր են վերցնում: Այս խառնուրդն զգուշութեամբ խառնում, հետո սրսկող մեքենայի միջոցով սրսկուել են:

4. Դաշտում տնկած ծխախոտը թրթուրներից մնասված լինելու դեպքում, մնասված մասերին փարիզյան կանաչի և չոր, փոշենման հանգած կրի խառնուրդ են սրսկում: Մեկ մաս փարիզյան կանաչին 10 մաս կիր են վերցնում:

Յերբ օւրիշ դաշտերից թրթուրների փոխանցման վտանգ և սպառնում, ծխախոտ տնկելու դաշտը շրջապատում են մոտավորապես 20 սանտիմետր խորութեամբ առուններով, կամ խոր ահոսով: Առվի կամ աղոսի մեջ անհրաժեշտ և թունադոք զրավչանյութ ջող տալ:

6. Գարնանը, թիթեռների թռչելու ժամանակ, ոգտակար և նրանց վորսալ դոշապե հեղուկով: Զրով լուծված սիրոպը (1 մաս դոշապին 1 մաս շուր) լցնում են տաշտակների մեջ և դնում ծխախոտի հարևան դաշտերը: Տաշտակները պետք և դնել գետնից 70 սանտիմետր բարձրութեան վրա: Յուրաքանչյուր մեկ հեկտարին մեկ տաշտակ և դրվում: Թիթեռները թռչում են դեպի դոշապի հեղուկը և խեղդվում նրա մեջ:



Սկամորթ բզեզի թրթուրը տեսքով քիչ նման է լարաթրթուրին, այս պատճառով ել նրան անվանում են կեղծ-լարաբրուր: Սկամորթներից բոլորից շատ ծխախոտի դաշտերում հանդիպում է ավազուտային մեղվակը:

Ավազուտային մեղվակը 7—9 միլիմետր յերկարությամբ մի փոքրիկ բզեզ է: Նրա մարմինը յերկարավուն-ձևաձև է, սև-մուգ-մոխրագույն, թևապանակները՝ յերկար ուռուցքավոր, յերկարաձև գլանով, կողքերը՝ փոքր բարձրությամբ:

Բզեզները յերևում են վաղ գարնանը: Առաջին իսկ տաք օրերին նրանց կարելի յե նկատել բաց և լավ լուսավորված վայրերում, վոբոնդ գուրկ է բուսականությունից: Բզեզները կերակրվում են զանազան բույսերով և յերբեմն շատ ուժեղ մխասում են ծխախոտի տերևները: Զուգավորումից հետո եզերը հողի մեջ փոքր ձվեր են ածում: Զվիկների միջից դուրս յեկած թրթուրները կերակրվում են արմատներով կամ հողի տակ մնացած զանազան բույսերի ցողունների մասերով, վոբոնց թվում՝ և ծխախոտի: Թրթուրները ծխախոտի ցողունի կեղևը կրծոտում են, վորի հետևանքով ծխախոտի անն սկզբում յեա՛ե մնում, իսկ հետո ցողունը չորանում է:


Թրթուրների աճելն ու կերակրվելը տևում է մոտ 50 օր: Ավազուտային մեղվակի մեծահասակ թրթուրը յերկարավուն գլանակադրաձև է, ուռած գլխով և լավ

նկատելի վերին շրթունքով: Առջևի վոտքերը բա-
վականին յերկար են և ալելի հաստ, քան մնացած
ները: Թրթուրը մոխրագույն է, կամ գորշ-մոխրա-
գույն: Թրթուրի յերկարութլունը մինչև 20 սան-
տիմետր է:

Թրթուրները հարսնյակ են դառնում հողի մեջ,
և 2 շաբթից հետո հարսնյակներից բզեզներ են
դուրս գալիս: Բզեզները ձմեռում են և հաջորդ գար-
նանը ձու դնում:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ավազուտային մեղրյակի դեմ պայքարը, վորքան
հնարավոր է շուտ պետք է սկսել, հենց վոր բզեզները
նկատելի չափով յերևան: Բզեզների վոչնչացման
համար գործ են ածում թեփից պատրաստած թու-
նավոր գրավչանյութեր: Մեկ կիլոգրամ փարիզյան
կանաչը լուծում են 30 լիտր ջրի մեջ և ստացած
խառնուրդն անընդհատ խառնելով՝ 40 կիլոգրամ
թեփ են ափելացնում: Գրավչանյութը դաշտում կույ-
տեր են դնում ու խոտով կամ հողի կնձիկներով ծած-
կում: Մեկ հեկտարին անհրաժեշտ է մոտավորապես
40 կիլոգրամ թեփ: Այդ նույն գրավչանյութն ողտա-
գործվում է նաև թրթուրների վոչնչացման համար:
Այդ նպատակով գրավչանյութը $1\frac{1}{2}$ - 2 սանտիմետր
խորութլամբ դնում են ակոսների մեջ ու հողով ծածկում





Քաղ. խմբագիր՝ Հ. Գ ա ս ա ղ յ ա ն
Մասն. խմբագիր՝ Գր. Ա դ ա մ ա լ յ ա ն
Տեխ. խմբագիր՝ Հ. Մ ու Ր ա ղ յ ա ն
Սրբագրիչ՝ Գ ա Ր՝ Լ ա կ ո Ր յ ա ն

Գլազիլտի լիազոր № 1114 հրատ. № 374 պատվ. 640 տիրած 500
Հանձնված և արտադրության 1936 թ. սեպտեմբերի 15-ին
Ստորագրված և ապելու. 1936 թվի հոկտեմբերի 1-ին

Գյուղհրատի ապարան, Յերևան Եղևանդյան 11

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038832